ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ Ռ. ԴՐԱՄԲՅԱՆԻ ՀՈԲԵԼՅԱՆԻՆ

2016 թվականին լրացավ վաստակաշատ գիտնական, արվեստի պատմաբան և գեղարվեստի քննադատ, Հայաստանի կերպարվեստի թանգարանի (ներկայումս՝ Հայաստանի ազգային պատկերասրահ) առաջին տնօրեն, Հայկական ԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Ռուբեն Գրիգորի Դրամբյանի (1891–1991) ծննդյան 125-ամյա հոբելյանը: Ինչպես նշել է Արարատ Աղասյանը «Պատմաբանասիրական» հանդեսում լույս տեսած «Հայ արվեստագիտության դրոշակակիրը» հոդվածում՝ «ծանրակշիռ ու նշանակալից է Ռ. Դրամբյանի ներդրումն ինչպես հանրապետությունում թանգարանային գործի կազմակերպման բնագավառում, այնպես էլ հայ արվեստաբանական մտքի ձևավորման ու զարգացման ասպարեզում, ինչն իր արտացոլումն է գտել նրա գրքերում և մենագրություններում, հոդվածներում ու զեկուցումներում, Հայաստանի կերպարվեստին նվիրված պատմական ակնարկներում»[1]:

Հոբելյանական միջոցառումների շրջանակում ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ, ՀՀ մշակույթի նախարարության ֆինանսավորմամբ հրատարակվեց Ռ. Դրամբյանի "Из истории армянского искусства" հոդվածների ժողովածուն, որը կազմել և հրատարակության է պատրաստել Ռ. Դրամբյանի դուստրը՝ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի կերպարվեստի բաժնի գլխավոր գիտաշխատող, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր Իրինա Դրամբյանը: Նա է հեղինակել ժողովածուի առաջաբանը:

ՀՀ մշակույթի նախարարության, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի և Հայաստանի ազգային պատկերասրահի նախաձեռնությամբ Հայաստանի ազգային պատկերասրահի որմնանկարների դահլիճում 2016 թ. հոկտեմբերի 5-ին և 6-ին գումարվեց գիտաժողով՝ նվիրված Ռուբեն Դրամբյանի ծննդյան 125-ամյա հոբելյանին: Պատահական չէր գիտաժողովի անցկացման վայրի ընտրությունը: Լինելով ՀԽՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի կերպարվեստի բաժնի առաջին վարիչը՝ Ռ. Դրամբյանը երկար տարիներ ղեկավարել է Հայաստանի պատկերասրահը: Ավելին՝ այսօր Հայաստանի ազգային պատկերասրահի ճակատային հատվածում է գտնվում Ռ. Դրամբյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը, որի տեղադրման նախաձեռնությունը կրկին ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտինն էր (2012 թ.), որ հավանություն գտավ Երևանի քաղաքապետարանի և ավագանու կողմից: 2013 թ. հոկտեմբերի 12-ին, «Էրեբունի-Երևան 2795» տոնակատարության շրջանակներում տեղի ունեցավ հուշատախտակի բացման հանդիսավոր արարողությունը:

---

[1] **Աղասյան Ա.,** *Հայ արվեստագիտության դրոշակակիրը (Ռուբեն Դրամբյանի ծննդյան 125-ամյակի առթիվ) (Պատմաբանասիրական հանդես, 2016, 3 (203), էջ 68):*

«Ռուբեն Դրամբյան – 125» գիտաժողովի բացման խոսքով հանդես եկավ ՀԱՊ տնօրեն, արվեստագիտության թեկնածու Արման Ծատուրյանը:

Գիտաժողովի մասնակիցներին ողջունեց ՀՀ մշակույթի նորանշանակ նախարար Արմեն Ամիրյանը՝ հատկապես շեշտելով Ռուբեն Դրամբյան նվիրյալի և նրա սերնդակիցների մեծ ներդրումը ազգային մշակույթի հարատևման ասպարեզում:

Երկօրյա գիտաժողովի չորս նիստերի ընթացքում լսվեց 17 զեկուցում, որոնցից 8-ը նվիրված էին հենց Ռ. Դրամբյանի գործունեության ուսումնասիրությանը:

Առաջին նիստում (նախագահող՝ ՀԱՊ փոխտնօրեն, արվեստագիտության թեկնածու Սամվել Հովհաննիսյան) լսվեց 4 զեկուցում:

«Ռուբեն Դրամբյանի դերը ազգային պատկերասրահի ստեղծման գործում» զեկուցման մեջ Իրինա Դրամբյանը նշեց, որ իր պաշտոնավարության ոչ լրիվ երեսուն տարիների ընթացքում Ռ. Դրամբյանը սահմանեց թանգարանի հայեցակարգը, հավաքեց նրա երեք բաժինների հարուստ ֆոնդերը՝ փաստորեն ձևավորելով Հայաստանի ազգային պատկերասրահի հավաքածուի հիմնական կորիզը և ստեղծելով Ռ. Դրամբյանի մեծարժեք ժառանգության հավաքածու, «ինչով մենք լիիրավ կարող ենք հպարտանալ»:

Ազգային նոր կերպարվեստի ուսումնասիրման ասպարեզում Ռ. Դրամբյանի անուրանալի վաստակին նվիրված «Ռուբեն Դրամբյանը՝ հայ նոր կերպարվեստի պատմաբան» զեկուցման մեջ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արարատ Աղասյանը նկատեց, որ Ռ. Դրամբյանն առաջինն էր, որ հիմնավորապես ուսումնասիրեց և ընդհանուր գծերով, համառոտ ակնարկների տեսքով ներկայացրեց հայկական գեղանկարչության, գրաֆիկական արվեստի ու քանդակագործության պատմական գրեթե երեքհարյուրամյա զարգացման բարդ և շատ առումներով խճճված պատկերը՝ սկսած XVII դարի կեսերից մինչև նախընթաց դարի կեսերը: Բանախոսը հատկապես կարևորեց գիտնականի ներդրումը տվյալ շրջանի հայ կերպարվեստի ականավոր վարպետներ Հակոբ Հովնաթանյանի, Եղիշե Թադևոսյանի, Մարտիրոս Սարյանի, Հակոբ Գյուրջյանի, Հակոբ Կոջոյանի և Ալեքսանդր Բաժբեուկ-Մելիքյանի կյանքի ու ստեղծագործության ուսումնասիրման բնագավառում՝ արվեստագետներ, որոնց Ռ. Դրամբյանն առանձին մենագրություններ է նվիրել:

Գիտաժողովի շրջանակներում հրատարակվեց Ն. Քոթանջյանի հեղինակած «Ռուբեն Դրամբյան. կյանքն արվեստում» (Ե., 2016) գրքույկը, որտեղ Ռ. Դրամբյանի մահից գրեթե քառորդ դար անց հեղինակը փորձել էր գնահատել նրա բացառիկ ներդրումը XX դարի հայ գեղարվեստական կյանքի մեջ և հիշել նրան որպես բարոյական բարձր հատկանիշների տեր անձնավորություն:

Ռուբեն Դրամբյանն ու խոշոր տեսաբան, կոմպոզիտոր, մանկավարժ, երաժշտական-հասարակական գործիչ, պրոֆ. Քրիստափոր Քուշնարյանը (1890-1960) եղել են համադասարանցիներ՝ Թիֆլիսի առաջին գիմնազիայում: «Ռուբեն Դրամբյանը և Քրիստափոր

Քուշնարյանը» զեկուցման մեջ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրենի տեղակալ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆ. Աննա Ասատրյանը Ռ. Դրամբյանի հուշագրության և նամակների հիման վրա ներկայացրեց Ռուբեն Դրամբյանի և Քրիստափոր Քուշնարյանի մարդկային և ստեղծագործական շփումները:

Առաջին նիստը եզրափակեց ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի կերպարվեստի բաժնի ավագ գիտաշխատող, Մարտիրոս Սարյանի տուն-թանգարանի տնօրեն, բանասիրական գիտությունների թեկնածու Ռուզան Սարյանի «Կես դար տևած բարեկամություն՝ Մարտիրոս Սարյանի և Ռուբեն Դրամբյանի նամակագրությունը» զեկուցումը: Մ. Սարյանի ընտանեկան արխիվում պահպանվում են Ռուբեն Դրամբյանի գրած թվով 25 անտիպ նամակ և բացիկ: Ռ. Դրամբյանին ուղղված Մ. Սարյանի նամակների մեծ մասը տեղ գտավ «Մարտիրոս Սարյան: Նամակներ» գրքի առաջին (2002) և երկրորդ (2012) հատորներում, կզետեղվեն նաև տպագրության պատրաստվող երրորդ հատորում: Բանախոսի կարծիքով՝ Սարյանի նամակագրությունը Դրամբյանի հետ բացառիկ տեղ է գրավում նկարչի նամակագրական ժառանգության մեջ: Այն արտացոլում է Հայաստանի՝ 1920–1960 թթ. մշակութագեղարվեստական կյանքի կազմավորման, կայացման և զարգացման, թանգարանային գործի, մշակութային օջախների, հայ արվեստաբանական դպրոցի ստեղծման հիմնական փուլերը:

Երկրորդ նիստում (նախագահող՝ ՀԱՊ գիտքարտուղար Արմինե Գաբրիելյան) «Ռուբեն Դրամբյանը՝ գեղարվեստական քննադատ» զեկուցման մեջ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի կերպարվեստի բաժնի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու Արթուր Ավագյանը դիտարկեց Ռ. Դրամբյանի գործունեությունը գեղարվեստական քննադատության բնագավառում, քանի որ մեծ է նրա ավանդը խորհրդահայ գեղարվեստական քննադատության ձևավորման գործում:

«Ռուբեն Դրամբյանի դերը Հակոբ Հովնաթանյանի արվեստի հայտնաբերման և արժևորման գործում» զեկուցման մեջ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի կերպարվեստի բաժնի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու Գարեգին Քոթանջյանը նշեց, որ երկար տարիներ զբաղվելով արվեստի պատմությանն անհայտ գեղանկարչի գործերի որոնման և ձեռքբերման աշխատանքով՝ Դրամբյանը միաժամանակ դրեց նրա արվեստի պրոֆեսիոնալ ուսումնասիրության հիմքերը՝ հրապարակելով հոդվածներ, զեկույցներ, կազմակերպելով ցուցահանդեսներ: Արվեստաբանի գրչին է պատկանում նաև նկարչի ստեղծագործությանը նվիրված լրջագույն մենագրությունը, որի վրա աշխատել է գիտնականը շարունակաբար՝ հատկապես կյանքի վերջին 10 տարիներին: Բանախոսը կարևորեց այն հանգամանքը, որ Դրամբյանը Հովնաթանյանի արվեստը դիտարկում է համաշխարհային մշակութային ժառանգության լույսի ներքո՝ բացահայտելով նրա գեղանկարչության եզակիությունն ու բացառիկ բնույթը:

«Ռ. Դրամբյանի գործունեությունը թանգարանի ձևավորման տարիներին (ըստ Ազգային արխիվի նյութերի) զեկուցման մեջ ՀԱՊ աշխատակից Հայկուշ Սահակյանը ձևակերպեց

թանգարանում Դրամբյանի գործունեության չորս հիմնական ուղղությունները՝ գիտական կադրերի պատրաստում և մասնագիտացում, ցուցահանդեսների կազմակերպում և գիտահետազոտական աշխատանք, հավաքածուի համալրում նոր ցուցանմուշներով, թանգարանային առարկաների պահպանության պայմանների և տարածքի խնդրի բարելավում:

Հետևելով Ռ. Դրամբյանի գործունեությանը թանգարանի ստեղծման օրվանից՝ բանախոսը եզրակացրեց, որ նա, հիմքում ունենալով ռուսական թանգարանների մոդելը, կարճ ժամանակամիջոցում կարողացավ պատկերասրահը դարձնել ԽՍՀՄ հեղինակավոր թանգարաններից մեկը:

Ռ. Դրամբյանի գործունեությանն ու վաստակին նվիրված զեկուցումների շարքը եզրափակեց ՀԱՊ գլխավոր ֆոնդապահ Վեհանուշ Փունաջյանի «ՀԱՊ-ի հավաքածուի հաշվառման որոշ առանձնահատկությունների մասին» զեկուցումը, որտեղ բանախոսը կարևորեց Ռ. Դրամբյանի ներդրումն Ազգային պատկերասրահի հավաքածուի կազմավորման և համակարգման գործում: Հեղինակը, հենվելով պատկերասրահի հատուկ հաշվառման ուսումնասիրության իր փորձի վրա, վերհանեց մի քանի հիմնախնդիրներ թանգարանի հաշվառման համակարգում, որոնք լուծման կարիք ունեն:

Գիտաժողովի ընթացքում թանգարանագիտությանը նվիրված զեկուցումներով հանդես եկան ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի, ինչպես նաև մայրաքաղաքի բուհերի՝ Երևանի պետական համալսարանի և Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի, և թանգարանների՝ Հայաստանի ազգային պատկերասրահի և Ս. Փարաջանովի թանգարանի ներկայացուցիչները, այդ թվում՝ Դ. Պողոսյանը, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆ. Հ. Պետրոսյանը, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Լ. Աբրահամյանը, Ա. Ավագյանը, պատմական գիտությունների թեկնածու Հ. Պիկիչյանը և ուրիշներ:

Գիտաժողովի շրջանակներում ՀԱՊ Որմնանկարների դահլիճում տեղի ունեցավ Հայաստանի պետական կամերային նվագախմբի համերգը՝ Վահան Մարտիրոսյանի ղեկավարությամբ, որի ընթացքում հնչեցին Կոմիտասի և Արամ Խաչատրյանի ստեղծագործությունները:

Օրերս ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչությունը լույս ընծայեց «Ռուբեն Դրամբյան – 125» գիտաժողովի զեկուցումների ժողովածուն:

ԱՍԱՏՐՅԱՆ Ա. Գ.

Արվեստագիտության դոկտոր